ՕՐԷ ՑՕՐ

(ՆՍԵՄԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԻՑ)

Հոկտեմբերի 10.

Գրեթէ ամենայն օր կարելի է տեղական լրագիրներում հանդիպել այսպիսի տողերի՝

*—*5 *Ֆրանսիացիներ ժամանեցին այսօր մեզ մօտ և մտադիր են ծանօթանալ մեր Կովկասի հետ։*

*—*2 *Բէլգիացի ինժեներներ՝ ուղարկուած բէլգիացի դրամատէրերի կողմից՝ հասան Թիֆլիս և մտադիր են ուսումնասիրել այս ինչ գործը։*

*—*3 *Անգլիացի՝ այս ինչի ներկայացուցիչներ՝ երէկ հասան տեղս և մտադիր են երկու ամիս մնալ Կովկասում հետազօտութիւններ անելու համար։*

Եւ սոցա հետևանքը լինում է այն որ Ռօտշիլդ, Նօբէլ, Գալսկէ և այլն քայլ առ քայլ հաստատւում են մեզանում... Չը կայ վատութիւն առանց լաւութեան, չը կայ տխրութիւն առանց ուրախութեան և մխիթարութեան։ Չէ որ մեր դրամատէրները ու մեր վաճառականները պէտք է վերջապէս հասկանան որ եթէ ուզում են մի կտոր սեփական հաց ունենալ, պէտք է հնադարեան թուլամորթութիւնը դէն գցեն և արդիւնագործութիւններ ստեղծեն...

Հոկտեմբերի 15.

Անխոնջ պրոֆէսոր Մ. Չէրազ մասնակից է եղել Լոնդոնում տեղի ունեցած Congrès International du Folks—Lore (*Միջազգային ժողով ազգային բանաստեղծութեան*) 1 *հոկտեմբ. ն. տ. նիստին և պատասխանելով զանազան ատենախօսների, որոնք, մի հէքեաթի առիթով, ուր հերոսը խօսում է մի դրան հետ, հարցնում էին ժողովից արդեօք Արևելքն է փոխ առել Արևմուտքից իւր հէքեաթները, թէ Արևմուտքը Արևելքից—Մ. Չերազ պատմեց ունկնդիրներին մի հայ հէքեաթ, որի հե-*

բոսը ոչ միայն խօսում է մի դրան հետ, այլ՝ այն Դուռը անդամ բարձր Դուռը նրան լսում, հասկանում և ջախջախելով հնազանդում է...

Հոկտեմբերի 25.

*1812 թ. աղետալի պատերազմը իւր սոսկալի հետեւանքներով յայտնի է ամենքին։ Ութսուն տարի յետոյ, մեր օրերում, Ֆրանսիացիների նմանօրինակ մի արշաւանք, թէև խաղաղ, կուլտուրական արշաւանք, տեղի է ունենում դէպի Մոսկւա՝ թողնելով իւր ետեւից մի մեծ աղէտ—սո

Ռուսաստանի 22 ներքին նահանգներում։*

Եւ այսպէս կատարուեց Պետերբուրգի մի լրագրի գուշակութիւնը թէ до добра не доведетъ пріѣздъ французовъ!

Հոկտեմբերի 26.

Վրաց հասարակութիւնը չէ յաճախում իւր թատրոնի ներկայացումները։ Դեռ երկուշաբթի օրերը հասկանալի է։ Այդ օրը ներկայացում... ներողութիւն, նիստ է լինում քաղաքային դումայում և վրաց հասարակութիւնը, իբրև քաղաքային յաներին նախանձախնդիր, դերադասում է լուրջ գործերով զբաղուել, քան թէ ներկայացումներով զուարճանալ։ Բայց ինչ կասէք մնացեալ լի օրերի համար։—նա այդ օրերը նախապատրաստութիւններ է տեսնում գալոց երկուշաբթի օրերի համար։

Հկտեմբերի 28.

Պր. Նիկոլաձէ ծախելով իւր լրագիրը չէ հեռացել իսպառ լրագրական ասպարիզից, այլ շարունակում է իւր նախկին լրագրի մէջ „На праздники" *բանասիրականները։*

Եւ դորա մէջ նկատում եմ оппозиція *ասուած կուսակցութեան առաւելութիւնները դումայում։ Դումայի կուսակցական գործերի աջողութեան համար այլ ևս հարկ չկայ ժողովներ կազմել, փողեր ծախսել և ծածուկ միջոցների դիմել։ Օրը ցերեկով գրւում է ծրագիրը, բաժանւում են դերերը, անելիքները, անւում են յանդիմանութիւններ գործած սխալների համար և այն պ. Նիկոլաձէի բերանով։ Առաջարկում ենք այսուհետև* На праздники *տեղ գրել՝* На понедѣльники։

Հոկտեմբերի 30.

Ասացէք, խնդրեմ, հարցնում էի ես իմ ռուս բարեկամ Աւսեւին, ինչ է պատճառը, որ ռուս հասարակութիւնը չէ յաճախում ռուս ներկայացումներին։

—Ներեցէք, ասաց։ и безъ того холодъ и голодъ со снѣгомъ—да и жизнь-то наша трагедія на комедіи—а тутъ еще ходить на драму, для сраму что-ли? Помилуйте.

Եւ ես ողորմեցի։

Հոկտեմբերի 31.

Թիֆլիսում այժմ չի կարելի մի քալլափոխ անել առանց տեսնելու մի переселенецъ-ի [1]) դէպի քեզ կառկառած ձեռքը, կամ լսելու նորա ողորմութիւն խնդրող աղիողորմ ձայնը։ Եթէ այս երևոյթի առաջը չառնի և նա ըստ պատշաճին կարգի չը դնի—մեր Կովկասին էլ կպցնէ սովը մօտիկ ապագայում, թէկուզ արգելէք, թէկուզ՝ ազատ թողնէք հացահատիկների արտահանութիւնը։

Նոյեմբերի 2.

Վրացի հասարակութեան և լրագրութեան մէջ այս օրերս տիրում է անեկարագրելի ցնծութիւն։ Ը կարծէք թէ պատճառն այն է, որ մի վրացի որ և է նշանաւոր գիւտ է արել, կամ թէ վրաց հասարակութիւնը մի մեծ քայլ է արել ժողովրդի կրթութեան գործում, կամ թէ վրացիները յանկարծ խնայող և աշխատասէր են դառել։—Ոչ. այլ պատճառը մի վրացի վաճառականի մահն է, որը կտակ է թողել բարեգործական նպատակով 900 ռ.։

Այս առաջին անգամն է, բացականչում են վրացիները, որ անգրպատմական ժամանակից ի վեր, մի վրացի այդ օրինակ մի բարի գործ է կատարում։

Հանգուցեալի անունը յաւերժացնելու համար ես կարձանագրեմ այստեղ նորա անունը՝

Սոլոմոն Իւանիշ Միքէլաձէ

Ախալքալաքի գաւառի Կիլդիգի գիւղում ծնուած ու մեռած։

Ասուած տալ, որ նորա օրինակին հետևողներ շատ լինեն բոլոր ազգերի և գլխաւորապէս վրացիների մէջ։

Նոյեմբերի 4.

Էգուց պիտի որոշի իմ ապագան. էգուցէ լոյս տեսնելու իմ Օրէցօրը։ Եւ որովհետև ես վճռել եմ մի քանի օրով հեռանալ Թիֆլիսից, ես վերցնում եմ հետս պ. Գր. Արծրունու աշխարհահռչակ դառած Էվէլինան։

---

[1]) Գաղթական։

Ես կաշխատեմ, իսկելով մեր լրագիրների ընդունած ձևով՝ «մի այլ անգամ վերադառնալ» այդ գրքին։

Նոյեմբերի 7.

Ասում են որ մեր քաղաքային Ուպրաւան մտադրութիւն ունի քաղաքի հաշուով չինել ձիաքարշ երկաթուղիներ և տելէֆոնի ցանց։

Զգուշ եղէք, պարոններ, որ ձեր տելէֆոնի հետ ես աչսպիսի կուրիօզներ չը պատահեն։ Աբոնէնտներից մէկը կը ցանկանայ դիցուք իմանալ Թատրոնի կասսայից թէ՝ տոմսակ կայ Տ. Սիրանոյշի բէնէֆիսին կամ օպէրային որ և իցէ ներկայացման, և յանկարծ նորան կը կապեն քաղաքային գումայի հետ, որով խեղճ աբոնէնտը, ստիպուած կը լինի լսել թէկուզ ձայնատար Շահ-Աղիզին այս խօսքերը արտասանելիս՝ quousque tandem Ismail of abuteris patientiam nostram!

Նոյեմբերի 10.

Կան ճշմարտութիւններ, որոնք կարօտ չեն ապացոյցների—դրանց անուանում են «ակսիօմա»։

Թէ հայերը օտար լեզուները սովորում են գեղեցիկ և ճիշտ արտասանութեամբ—այդ ակսիօմաներից մէկն է, և երեկուայ Սաֆրազեան ամուսինների տուած թուրքերէն ներկայացումը մի նոր և փառաւոր ապացոյց էր վերոյիշեալ մտքի։

Պէտք է խոստովանել որ Ս. Սաֆրազեան բեմի վերայ իւր ամբողջութեամբ մի կատարեալ պարսիկ էր, աւելի պարսիկ, քան մի որ և է պարսիկ։ Երևի այդ էր պատճառը որ ներկայացմանը մի ջուխտ մի կենդ պարսիկ կային միայն։

Նոյեմբերի 11.

Ակսոր կարդացի «Մշակ»-ի մէջ մի ոչ լիովին գիտնական «Ուսուցչի» գրածը «Մուրճ»-ի առիթով։

Սա էլ, գիտէք, մի ձև է գրելու՝ «Մուրճ»-ի յօդուածները դեռ լիովին գիտնական չեն—Հելմոլց ու Ֆիրխոֆը աւելի լաւ կը դրէին. առաջնորդողները դեռ ամեն բան չեն պարզում—Ջոն Սթիւարթ Միլը աւելի լաւ կը գրէր, բայց ափսոս մեռել է. մի տասնեակ ոտանաւորների մէջ Բայրոնը, Հէյնէն, Լերմոնտով միայն մի քանիսը կը հաւանէին. բայց ափսոս որ նոքա էլ մեռել են և այդ վկայութիւնը չեն կարող իրանք տալ։ Հասարակաց խնդիրներ բնաւին չկան, որովհետև միայն մի քանի հասարակական խնդիրների մասին է խօսում քրոնիկը. և ոչ բոլոր այն խնդիրների մասին, որոնք կան երկրագնդիս բոլոր ծակ ու ծակերում։

Քաղականը ոչինչ չի տալիս, և ես գերադասում եմ կարդալ Ջոն Լեմուա-նին ու Ջարլս Դիկկին»։

Նոյեմբերի 12.

Պարիզից յետոյ ամենաուրախ քաղաքն է աշխարհիս վրայ Թիֆլիսը— երևի այդ է պատճառը որ առաջին ռ ու ս օպերետկան գրուել է չը կար-ծէք Պետերբուրգում, կամ այլ ուր, այլ Թիֆլիսում։ Փաստաբան Օպոչի-նինի АВТОМАТЪ օպերետը ներկայացուեց երեք առաջին անգամ մեզանում, այստեղ, իսկ Մոսկւայում նորան տալիս են շաբաթը երեք անգամ։

Նոյեմբերի 13.

Ժամք կենցաղոյդ հասեալ ի նէա մահուան կշռոյն ի նժար,
Կոչեն ըզքեզ, ո Թագուհիդ, «եկ բոլորել ըզմեր պար,
«Հանգչել ընդ մեր սուրբ հովանեաւ քեզ ի վաղուց աստ պատրաստ,
«Զընաշխարհիկ քան զապարանս արքունական փառազարդ»։

Ես բանաստեղծ եմ հոգով բայց բարեբաղդաբար ոչ գրչով, և ձեր կարդացած չորս տողերը ինձ չեն պատկանում, այլ առած են մի բանա-ստեղծութիւնից [1]) երգեալ յԱխտէֆանօս 1891-ի 25 յուլիսի ի Գէորգէ Սամանճեան, ի սգալի մահ ազնուազարմ մերձապատիւ №. №. ամիրայի դստեր օրիորդին №. №.

Նոյեմբերի 14.

Այս ամսւայ հայոց թատրոնի կուրեօզներից մի քանիսը։

—«Մի կնոջ սանձահարումի» ժամանակ երկու դերասաններ՝ մէկը թզուկ, միւսը հսկայ, բեմի վերայ իրար դերերը և հագուստները փոխելիս, ասում են իրար.

—Մեզ ոչ ոք չի ճանաչիլ. մենք իրար շատ նման ենք։

—«Արշակ Բ.»-ի ժամանակ երբ նա Անյուշ բերդի բանտից դուրս էր եկել լոյս աշխարհ և զւարճանում էր տեսնելով բնութեան չքնաղութիւնը— արհեստական սոխակը (որ հարկ էր համարւած լսել տալ հասարակու-թեանը) զահլա տարաւ իւր անվերջ ճլւլոցով։

—«Օրւայ չարիքի» մէջ Թխլիկ միլիկ ասաց այնպիսի մի օրիորդի համար, որ շատ հեռու էր իբր մի այդպիսի մէկը նկատուելու։

[1]) Հանդէս ամսօրեայ № 11. 1891.

Նոյեմբերի 28·

Խեղճ փղշտացի… Իբրև աշխարհի մէկը որ «քիչ ժամանաց է և սակաւապահանջ», նա չը կարողացաւ «Մուրճ»-ի բոլոր համարները լցնել տալ իւր սիրած կլասիկական հայ մատենագիրների, նախաքրիստոնէական և նախաջրհեղեղեան պերիօդների մասին անվերջ գրուցներով… և հեռացաւ «Մուրճ»-ից։

Սակայն «հեռանալով մի խմբագրից, նա չը կարողացաւ այլ ևս միւս խմբագիրների հետ էլ կտրել իւր յարաբերութիւնները [1]) և յարեց՝ անցած գնացած դարերին արձագանք եղող «Արձագանք»-ին։

«Իւր սիրած Նիւթով յափշտակւելով՝ մի անգամ (խեղճ միայն անգամ) իբրև մաքսանենգ ապրանք գաղտնագողի խօսեց Խորենացու մասին և այնքան ոգեւորւեց (ով չէ հաւատում) որ կամենում էր մինչև իսկ Նորա ողբը առաջ բերել [2]). բայց կրկին զգուշացաւ» և յարմար ու մօդային համարեց ինքը զինքը Նւիրել бабьимъ сплетнямъ...!

---

[1]) «Արձագանք» № 46.

[2]) «Արձագանք» № 46.